ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

«27» Հոկտեմբերի 2023 թ. N 2505-Ա

ՀՐԱՄԱՆ

«ԴՈՆԵՌ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 27-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

ՊԱՐԶՎԵՑ

Գործի նախապատմությունը.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 2023թ. սեպտեմբերի 27-ին համակարգչային տեխնիկայի, օդորակիչների, ցանցային բաժանարարի և հոսանքի անխափան սնուցման սարքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿԵՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ)՝ 8 (ութ) չափաբաժնով, որն իրականացվել է eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

Ընթացակարգի 6 (վեց) չափաբաժինների համար մասնակցության հայտ է ներկայացրել «ԴՈՆԵՌ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից 2023 թվականի հոկտեմբերի 23-ին տեղի ունեցած հայտերի բացման և գնահատման նիստում որոշվել է 6-րդ չափաբաժնի մասով որպես ընտրված մասնակից ճանաչել և հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԴՈՆԵՌ» ՍՊ ընկերությանը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 2-րդ մասով և 10-րդ հոդվածով՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը, Պատվիրատուն ծանուցել է ընտրված Մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Մասնակցին տրվել է հինգ աշխատանքային օր ժամկետ՝ վերջինիս կողմից հաստատված պայմանագիրը և որակավորման, պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված տուժանքի ձևով ներկայացնելու համար, սակայն վերջինիս կողմից հաստատված պայմանագիրը Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով չի կցվել և տուժանքի մասին համաձայնագրերը չեն ներկայացվել: Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, ուստի Հանձնաժողովը 2023թ. նոյեմբերի 17-ին տեղի ունեցած նիստում որոշում է կայացրել մերժել Մասնակցի կողմից ներկայացված հայտը և Ընթացակարգի 6-րդ չափաբաժինը, որի մասով «ԴՈՆԵՌ» ՍՊ ընկերությունը եղել է ընտրված մասնակից, հայտարարվել է չկայացած:

<u>Գործի քննության իրավական հիմքերը.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ

անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

հրամայում եմ

1. «ԴՈՆԵՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:

2. Հրամանը տրամադրվում է լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված ժամկետում և կարող է բողոքարկվել դատական կարգով:

11/27/2023

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Ա. ԵՐԻՑՅԱՆ

ք. Երևան